ՆԱԽԱԳԻԾ

Խ-257-07.02.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ կետի 20-րդ ենթակետի վերջում՝ «օտարում» բառից հետո ավելացնել «դիզելային վառելիքի ներմուծումը եւ (կամ) օտարումը»:

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1. 1-ին կետի աղյուսակի՝

2710 12	Բենզին	1 տոննա	40000 դրամ

տողի «40000» թիվը փոխարինել «25000» թվով:

2. 1-ին կետի աղյուսակի՝

2711 21	սեղմված բնական գազ	1000 մ^3	25000 դրամ

տողի «25000» թիվը փոխարինել «8330» թվով:

3. 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բենզինի մեկ տոննայի համար սահմանված ակցիզային հարկի եւ Օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 120000 դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որ բենզինի մեկ տոննայի համար ակցիզային հարկի եւ ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 120000 դրամի»:

Հոդված 3. Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

1. Եթե սույն հոդվածի 2-14-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է՝

1) ամսական դրույքաչափերի հետեւյալ սանդղակով.

Հարկման բազայի ամսական մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչեւ 150000 դրամը ներառյալ	~~23~~21 տոկոս
150000-ից մինչեւ ~~300000~~450000 դրամը ներառյալ	~~34500~~31500 դրամ՝ գումարած 150000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
~~300000~~450000-ից մինչեւ 2000000 դրամը ներառյալ	~~73500~~109500 դրամ՝ գումարած ~~300000~~450000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը

2000000-ից ավելի դրամ	~~549500~~543500 դրամ՝ գումարած 2000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

2) տարեկան դրույքաչափերի հետեւյալ սանդղակով.

Հարկման բազայի տարեկան մեծությունը	Եկամտային հարկի դրույքաչափը
մինչեւ 1800000 դրամը ներառյալ	~~23~~21 տոկոս
1800000-ից մինչեւ ~~3600000~~5400000 դրամը ներառյալ	~~414000~~378000 դրամ՝ գումարած 1800000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
~~3600000~~5400000-ից մինչեւ 24000000 դրամը ներառյալ	~~882000~~1314000 դրամ՝ գումարած ~~3600000~~5400000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը
24000000-ից ավելի դրամ	~~6594000~~6522000 դրամ՝ գումարած 24000000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: